ՀՐԱՉ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հրաչ Բեգլարյանը ծնվել է Լոռու մարզի Լեռնավան գյուղում: Սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի պատմա-հասարակագիտական բաժնում: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Սևանի շրջանի Ծովագյուղի միջնակարգ դպրոցում: Աշխատանքին զուգահեռ սովորել և ավարտել է ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան, մասնակցել Հայաստանի բազմաթիվ հնավայրերի պեղումներին: Հ. Բեգլարյանը պատմական գիտությունների թեկնածու է, դասախոսում է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում:

Դեռևս դպրոցական տարիներից նրա բանաստեղծությունները տպագրվել են «Պիոներ կանչ», «Լուսարձակ», հետագայում նաև՝ «Ավանգարդ», «Գարուն» և այլ պարբերականներում:

Հրատարակել է մոտ 10 գիրք, որոնցից 5-ը՝ գեղարվեստական գրականություն:

1996թ. «Հողի կանչը», պատմվածքների ժողովածու:

2006թ. «Դրախտի պատուհան», բանաստեղծությունների ժողովածու:

2009թ. «Մարախի տարի» պատմավեպը և «Թլոլ Դավիթ» վեպը:

2011թ. լույս է տեսել նրա «Հրապարակ» վեպը: Մամուլում հանդես է եկել տասնյակ պատմվածքներով, գիտական և հրապարակախոսական հոդվածներով:

Հեղինակ է նաև հոգևոր թեմաներով գրքերի՝ «Վասն հիվանդաց», «Հրաշապատում կամ զարմանալի պատմություններ», «Բարեպաշտության թանգարան» (թարգմանություն ռուսերենից) և այլն:

Նրա պատմվածքներից թարգմանվել են ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն:

ԴԵՂԻՆ ՃԱՄՊՐՈՒԿԸ

Սուրենը կրակում էր ասես ինչ-որ մեկին քշելու կամ հեռացնելու համար: Կրակում էր ինքնամոռաց: Պապի հին, կիսամաշ երկփողանի որսորդականը լուսաբացի մեջ թնդանոթի ձայն էր հանում.

– Բու՜մբ:

Ձայնը տասնապատիկ արձագանքելով գնում, բախվում էր քնած շենքերին, իր ձեռքով տասնհինգ տարի առաջ տնկած խնձորենիների բներին էր փաթաթվում և ծառերը, անպատեհ պահին սառը ջրի մեջ մտած հարսի նման, պտղավիժում էին ուներնում: Հողի մեջ, արմատների վրա փաթաթված ապահովության զգացողությունն իր մեջ քայքայվում, դառնում էր անպետք:

Սուրենն այդ մասին դեռևս չգիտեր, նա իր ցավն էր որձկում և հրացանի ամեն կրակոցի հետ հառաչանքի մի պարս էր կախվում երկնքի դեմքից՝ այնտեղ, ուր Վեներա մոլորակն իր կենտ ու զվարթ աչքով նայում է ներքև: Կրակում էր ու սիրտը ճմլվում, գալիս էր բերանը: Նրան թվում էր, թե ինքը մասնակից է մի մեծ ոճիրի, իր դեմ կատարվող դավաճանության, որի մեջ հենց ինքն է մեղավոր: Այդպես ոհմակի առաջնորդ որձն է կաղկանձում, երբ երեկ-մեկել օրվա թուլեն օրերից մի օր որձ դարձած՝ հենց աչքի առաջ առաջինն է տիրանում իր սիրած էգին, ու գելխեղդ գամփռը իր արուությունը հարցականի տակ դրված տեսնելով՝ կլանչում ու ոռնում է երկինքն ի վեր:

Տղան հեռվից սկսեց: Նստեց խոհանոցի սեղանի մոտ, մնչաց, ականջները քաշեց, քիթը քորեց և Սուրենը հասկացավ, որ ասելիք ունի, բայց վախենում է միանգամից սկսել:

– Ասա,– քմծիծաղեց:

– Հեչ,– հոգոց հանեց Հրանտը,– եկել եմ՝ կաշվե դեղին ճամպրուկը տանելու:

Ճամպրուկը հին պահարանի գլխին բազմած՝ ներքև էր նայում: Ժամանակին Սուրենն էր իր հետ բերել խորհրդային բանակից: Լավն էր՝ կաշվե, գոտիներով, ամուր փականներով, մանավանդ որ քիչ էր օգտագործվել:

– Ինչի՞դ է,– անհանգստացավ մայրը:

– Ահագին բան կտանի,– հարցին չպատասխանելով սեփական միտքը բարձրաձայնեց տղան:

– Տե՞ղ ես գնում,– էլի հարցրեց մայրը:

– Հա,– ասաց ու հոգոց հանեց՝ ասես իրեն զոռով էին ուղարկում:

Սուրենի սիրտը անհանգիստ տրոփեց: Այդպես եղավ մեկ էլ էն ժամանակ, երբ իրենց տանից գնալուց առաջ հարսը տղային դարձավ ու.

– Հրանտ, երեխայի գիշերանոթն էլ վերցրու,– ասաց:

Սուրենը բերած օրվանից գիտեր, որ հարսն իրենց հետ չի ցանկանում ապրել, որ ժամանակակից աղջիկ է ու «կեսուր-կեսրարի ցավ քաշելն» իր համար չէ: Կեցան իրենց հետ մի ամիս, հետո առանձնացան ու սկսեցին վարձով ապրել: Սուրենը մտքի մեջ հաշտվել էր այդ փաստի հետ, բայց գիշերանոթի տանելը սրտին կպավ: Բան չասաց: Հո գիշերանոթն ինքը չէ՞ր օգտագործելու: Պարզապես յոթներորդ զգայարանով զգում էր, որ տղային, ու մանավանդ թոռին, ուզում են հեռացնել իրենից: Լավ, իր երեք սենյականոց, վերանորոգված ջեռուցվող բնակարանը թողել, վարձով են ապրում, բա թելերն ինչու՞ են մեկ-մեկ կտրում:

Հիմա էլ մտածեց՝ հարսի հերթական խորամանկությունն է: Աչքը ծամպրուկի վրա է եղել, չի համարձակվել տանի, ամուսնուն ուղարկել է, թե՝ ասա տեղ եմ գնում: Թող տանեն: Ճամպրուկը Սուրենի ինչ՞ն է: Սուրենը վաղուց արդեն ոչ մի տեղ չի գնում, որ ճամպրուկի կարիք ունենա: Սուրենը գնալու մի ճանապարհ ունի, իսկ էդ ճանապարհին ոչ ոքի ճամպրուկ պետք չի եկել դեռևս: Եթե էս խելքին լիներ: Հարավսլավիա տուրիստ էր գնացել ու մի ռուբլի ավելորդ ծախս չէր անում, թե «նոր տուն եմ»: Երկու ձեռք սուրճի սպասք առավ, անկողնու ծածկոց, վարագույր: Էլի ուրիշ բաներ: Իրեն մի բաժակ գարեջրից զրկեց, Հարավսլավիայով մեկ ման եկավ՝ ավտոբուսի մեջ բաժակների տուփերը ծնկներին դրած: Իբրև թե աշխարհ տեսնելու էր գնացել:

Հիմա լիներ՝ գրողի ծոցը կուղարկեր ամեն ինչ, իսկ էն ժամանակ մտածում էր իրեն զրկի, որ երեխաները լի մեծանան, իր նման ամեն ինչ զրոյից չսկսեն: Բայց պարզվեց, որ ճիշտ չէր արել: Պարզվեց, էդ զրկանքը ոչ ոքի պետք չէր: Հիմա էլ Հրանտն է կրկնում իր ճանապարհը:

«Իմ տղան է,- մտքի մեջ Հրանտի հասցեին մրթմրթաց,- ասա ճամպրուկն ինչի՞դ է »: Բայց պարզվեց՝ Հրանտի մտքինն ուրիշ է:

- Գնում եմ,- ասաց նորից:

- Ո՞ւր,- վերջապես մտքերից սթափվեց Սուրենը:

- Կանադա:

- Ո՞ւր,- ձեռքը բերանին տարավ մայրը:

- Շատ փող ունե՞ս,- ձեռ առավ Սուրենը,- սաղ խաղերը խաղացել ես, մնացել է սարի սմբու՞լը: Հիմա քեզ միայն տուրիստ գնալն էր պակաս:

- Տուրիստ չեմ գնում,- երկար ծամծմածը միանգամից որձկաց տղան,- ընտանիքս առնում, գնում եմ:

Տղան ոչինչ, հարսը ջանդամը... բա թոռը: Առանց էն էլ շաբաթը մի անգամ հազիվ տեսնում է երեսը, հիմա էլ առնում, տանում են Կանադա՞:

- Կանադան ի՞նչ հորս ցավն էր,- տնքաց հուսահատ:

- Լավ էլ տեղ է,- իրենը պնդեց տղան,- գնացել, դիմում եմ գրել ու հարցազրույցն անցել եմ:

- Ինչ հարցազրույց,- ինքն իրեն գտնելու ճանապարհին հերթական անիմաստ հարցը տվեց Սուրենը:

– Հարյուր հարցանի տեստ եմ լրացրել, հարյուրից ութսուն եմ ստացել:

– Քո ետ գցողի մերը,– հայհոյեց,– տեստ լուծող էիր, ժամանակին քննություն տայիր, համալսարան ընդունվեիր, ինչ տեստ:

– Տունը տալիս են, աշխատանքը տալիս են, ամեն ինչ տեղը տեղին: Առաջին շրջանում բնակվելու և աշխատելու թույլտվություն են տալիս հինգ տարի, հետո նաև հիմնական բնակության թույլտվություն կստանամ:

– Բա մենք:

– Դուք ինչ,– սփոփեց,– ոնց լինի, որ տարվա մեջ մի անգամ չգանք: Մի մտածիր, հենց աշխատեմ, ձեզ խեղճ չեմ թողնի: Բացի այդ «սկայպ» կա: Օրը մի քանի անգամ հետներդ կկապվենք, կխոսենք:

– Ես քո «սկայպի» հոր հոգին,– կատաղեց,– էդ «սկայպն» արեց ամեն ինչ: Տուն, տեղ, ազգ, հայրենիք, նամուս մոռացած «սկայպ» հա «սկայպ»:

– Իմ ու քո պապերը չեն ասել՝ որտեղ հաց, էնտեղ կաց:

– Իմ ու քո պապերը,– տնքաց:

Պապը յոթ եղբայրներից ամենափոքրն էր եղել: Վեցին թուրքը տարել էր: Ձենք չէին ունեցել, արտ էր եղել ունեցածները: Ձենք գործածել չէին իմացել: Գերանդի, բահ, փոցխ ու եղան էր եղել բանեցրածները, ոսկորների մեջ՝ թուրքի վախը: Դարերով, կամաց-կամաց ներծծված վախը, ու մի ասկյար մի կայծքարե հրացանով առաջ էր խառնել գյուղի վաթսուն երիտասարդի ու քշել, լցրել էր եկեղեցին: Էդ խեղճությունը, էդ հեզությունը, էդ անդիմադիր ճորտությունը տեսնելով Աստված էլ էր զզվել նրանցից: Զզվել, զայրացել ու երես էր թեքել, թե սեփական անձը և մերձավորին պաշտպանելը մարդ-արարածի բնական իրավունքն ու վիճակն է: Ես ձեզ ազատություն եմ տվել, կամքի, ընտրության, սխալվելու ազատություն ու էդ ազատությունից չօգտվողներին ես օգնել չեմ ուզում: Վեցին վաթսունի հետ տարել, անհայտ, անիմանալի մի տեղ ոչնչացրել էին, ու մենակ պապն էր մնացել: Փորձել էր եղբայրների սխալն ուղղել ու զենք էր ունեցել: Ձենք գործածել էր սովորել: Հետո աշխարհը նորից էր խառնվել և նագանը թուրքի դեմ գործածելու փոխարեն ստիպված էր եղել յուրայինների դեմ օգտագործել: Բոլշևիկի ու դաշնակի պայքարի մեջ պապը բոլշևիկների կողմն էր բռնել: Մտածել էր, թե բոլշևիկները աղքատի սրտից են խոսում: Գյուղում, մեկը՝ դաշնակ, մյուսը՝ բոլշևիկ, իրար ատել էին: Նույն հողից, ջրից, օդից գոյացած բարեկամ ու ազգական՝ իրար ատել էին ու գիշերով եկել էին պապի տան վրա: Պապը, նագանի մեջ յոթ փամփուշտ, նագանի մեջ յոթը մահ, դուրս էր եկել ու սենյակի դռան առաջ կանգնել: Թիկունքը՝ ընտանիքին, մազոտ ու կրակոտ կուրծքը՝ դեպի թշնամի դարձած բարեկամը: Կանգնել ու գոռացել էր.

– Արի, ինչ ես կնկա պես թաքնվել:

Ասել ու կրակել էր՝ թրմխկ, կանչել ու լացակումած կրակել էր՝ թրմխկ: Կինը, երեխաներն իրար էին անցել, ուզեցել էին սենյակից դուրս գալ, բայց հոր լայն թիկունքը թույլ չէր տվել: Ինքը թիկունքի հետևում ընտանիքն ունենալով գոռացել էր.

Կայարան

– Արի՛: Գիշերով, գաղտնի, գողի պես, ընտանիքիս աչքի առաջ եկել ես՝ հոգիս առնե՞ս, արի՛,– ասել ու հերթական գնդակն էր բաց թողել՝ թրամխկ:

Կրակոցը դատարկ նախասրահում արձագանքել էր տասնապատկված ձայնով: Կրակել էր վեց գնդակն ու մեկը թողել էր: Ինչ իմանաս՝ չե՞ն հաշվել, ի՞նչ իմանաս չե՞ն սպասում, որ անզենք ու անգնդակ մնացած բռնեն ու գնդակահարեն:

Կանգնել էր երդիկից ներս ընկած լուսնի շողքի կողքին, աչքերը չորս արած խուզարկել էր մութն ու առաջ զգացել, հետո տեսել էր, թե ինչպես մեկը շողի կողքով անցավ ու դուրս սահեց դռնից:

– Կանգնի՛ր,– գոռացել էր,– կանգնի՛ր,– բայց չէր կրակել:

– Կանգնի՛ր,– գոռացել էր,– թուրքը վեց ախպորս տարավ,– ես մնացել եմ՝ ի՞նչ անեմ: Ես չլինեմ, տղաս կմեծանա,– ինքն իրեն ուղղել էր,– կանգնիր, թե հայը հային թուրք չլինի, ոչ մեկը նրան վնասել չի կարողանա: Կանգնիր քո թուրք մերը:

Գոռացել, ինքն իրեն ծվատել էր, բայց վերջին փամփուշտը իր հոգին առնել ցանկացող հայ թշնամու վրա արձակել չէր ուզեցել: Ախր աշխարհում ամեն մի հայ հաշիվ է: Հո չինացի չե՞նք, որ մարդու կորուստը հեշտ տանելի լինի: Քչի ամեն հատիկը հաշիվ է, չէ՞: Ախր դրացի են, ախր իր երեխաները վաղն էս գյուղում ապրել չեն կարողանալու, թե ինքն սպանի: Դրա համար էլ գոռգոռացել էր, թափահարել էր զենք բռնած ձեռքը, հայհոյել էր, բայց թույլ էր տվել, որ իր հետ մի ժամանակ հաց կիսած, հիմա հանգամանքների բերումով այլ ճամբարում հայտնվածը հեռանա: Ճիշտ է, իր տուն էր սողոսկել, ճիշտ է, ուզեցել էր իրեն վերացնել, բայց հայը հայի վրա զենք չպիտի բանեցնի: Հետո ի՞նչ, որ ինքը բոլշևիկ, ու նա դաշնակ է:

Սուրենը չգիտեր, որ տարիներ անց տղան պապի նագանը պիտի իր ճակատին պահի: Պիտի պահի ու վերջին փամփուշտը չխնայի.

– Հա, մարդուն մի կյանք է հասնում,– ասում էր,– կգնամ, կարգին կապրեմ,– և դրանից Սուրենի ցավը բազմապատկվում էր:

– Հաշվե՞լ ես քանիսն են գնացել: Մենակ էս շենքից քանիսը: Հաշվե՞լ ես:

– Վա՞մ է: Կգնամ, տեղս կպնդացնեմ, հետո էլ ձեզ կկանչեմ:

Սուրենն ափսոսում էր իր ափսոսալու համար, մի ամբողջ կյանք խնայելու և չծախսելու համար էր ափսոսում: Նոր ընտանիք էին, մարդ ու կին, կոլեկտիվով վիճակախաղ խաղացին, երկու հարյուր ռուբլի վերցրին ու կինն էս պատից կախած գորգն առավ:

– Հրանտիս համար,– ասաց:

Հետո էլի խնայեցին, որ միակ որդին չխնայեր, հավաքեցին մաս-մաս, կոպեկ-կոպեկ: Տուն դրեցին ու հիմա.

– Մի ամբողջ կյանք աշխատել ու հետ ես գցել: Ամբողջ կյանքիդ արդյունքն էս երեք սենյակը չէ՞: Հին ու մին կահույքով, ալյումինե գդալ-պատառաքաղով...,– չէր խնայում որդին:

Ասելը ոչինչ: Էդ ո՞ր որդին է հոր արած-դրածը հավանել, որ սա հավանի: Սուրենի սիրտը դող է ընկնում նրա ասելու տոնից: Ասում է այնպես, ասես դատավոր լինի: Չի խնայում:

Ախր ո՞նց բացատրի, որ կարի մեքենան առնելիս կինը այնպիսի ուրախություն էր ապրում, որ տասը «Մերսեդեսի» ուրախության հետ չես փոխի:

Սուրենին կատաղեցնում էր նոր սերնդի հոգեբանությունը: Հայրենիքն այնքան հեշտությամբ են թողնում, որ թշնամու քեֆը բերում են: Ինչի՞ց է տեսնես, որ ծնված-չծնված իրերը կապած ու աչքները հեռուներին է լինում: Անընդհատ ուրիշի գրպանի պարունակությունը հաշվողի նման ծնված օրից անգոհ ու անբավական են լինում: Աչքը ծակ, աչքը սոված ու անկուշտ՝ երկրագնդի բոլոր բարիքներն իրենցն են համարում, բայց նայում, տեսնում են՝ հագներին հոր հին շալվարն է, գրպանը՝ ծակ, ծնկին՝ կարկատան, հազար արհավիրք տեսած, մի ժամանակ դսնավուր եղած, հիմա ճմրթված շալվարը, որ Հայաստան անունն ունի: Եվ ամաչում են: Թե աշխարհն էլ բանի տեղ չդնի ու կարկատանը չտեսնի, իրենք ցույց կտան, թե աշխարհն էլ իրենց չնայի, իրենք մեջ կընկնեն: Ինչ անեն՝ արյան ու գեների հարց է, ինչ անեն: Ինչ պիտի տանջվեն, երկիրը շենացնեն, գնում են: Սիրուն կնիկ, շեն աներանք ո՞վ չի ուզի: Աշխարհում ինչքան ասես շեն երկիր կա: Ու էդ երկրների լիքը սեղանից թափված ավելցուկի հույսով գնում են: Էս երկիրը նեղ է գալիս վրաները հոր հին շալվարի նման: Չեն հասկանում, որ հոր տառապանքը, քրտինքը, փորձը և իրենին սովորի վստահությունն են կորցնում էդ շալվարն արհամարհելով:

Հրանտն ինչ է անելու Կանադայում: Էլի օրվա հացի խնդիր է լուծելու, հո նրան կառավարություն չե՞ն տանելու: Եվ ամբողջ կյանքում տառապելու է, որպեսզի կանադացիներին ցույց տա, թե ինքն իսկական կանադացի է: Կաշվից դուրս է գալու աչքի ընկնելու համար և աչքի է ընկնելու: Փորը կուշտ, բայց աչքն էլի սոված է մնալու և որքան էլ բթացնի ու բանի տեղ չդնի, պորտալարը մրմռալու է էս ծուռումուռ բներով խնձորենիների, էս կոշտուկոպիտ սարերի, քանդված փողոցների, էս որձ սառնության ու կապույտ երկնքի կարոտից:

– Ասում ես քանի՞սն են գնացել: Մեր շենքից, մենակ մեր շենքից ութ ընտանիք,– մատները ծալեց տղան:

– Հա, լավ են արել, որ գնացել են: Գնացել են, ինչ են անում: Օրինակ՝ Կամոն ու Սամոն մորն առան, Ղրիմ գնացին, չէ՞: Ղրիմում մերն էլի հին արհեստին չէ՞: Այստեղ օդանավակայանում էր փող հավաքում, էնտեղ՝ ավտոկայանում: Ասա՝ Արգենտինա գնացած Վաղոյին քանի՞ տարի է հարկավոր, որ իսպաներեն սովորի: Ինչ է անում, գիտե՞ս: Տունը ընտիր գորգերով զարդարած, ծաղկավոր մանրահատակով զարդարած թողել, հեռուներում ուրիշի ավելցուկի մեջ բախտ է որոնում: Ինչ գիտես, գտնվ է: Ապրելը չէ՞ր լինում Հայաստանում: Լա՞վ էլ ապրում էր, չէ՞: Չէ, մենք ամեն ինչի ընտիրն ենք ուզում, ամեն ինչի լավը, բայց էդ լավը մեր հողի վրա կառուցել չենք կարողանում: Ուրիշ հողում մենք նեգրից էլ նեգր ենք, մենք իտալացուց ավելի իտալացի ու հոլանդացուց առավել հո-

լանդացի ենք, իսկ մեր երկրում օրենքը չենք սիրում: Օրենքը նրա համար է, որ խախտենք:

– Քեզ որ լսենք,– դժգոհեց տղան,– քեզ որ լսենք, Հայաստանը դրախտ է, ու մենք չենք գնահատում, մենք չենք հասկանում:

Սուրենը տղային լսում էր ականջի ծայրով ու սեփական մտքերի հետ էր: Լիներ մի լայնարձակ, մի ընդարձակ, մի բերրի երկիր, ուր հասկը գցեիր հողի մեջ ու ծառի հովին պառկած քնեիր՝ մինչև հունձ: Հասկն ինքն իրեն հասունանար, պտուղն ինքն իրեն աճեր ծառի վրա, դու հովին պառկած՝ կաթեր բերանիդ մեջ: Լիներ մի պետություն՝ արդար, ժողովրդին տեր կանգնող, ժողովրդի մասին մտածող: Ոչ թե դու հաց ստեղծեիր, պաշտոնյան հասուն արտի ջուրը կտրողի նման տնկվեր վերևումդ, ու ծամածդ հացը մեծանար բերանիդ մեջ: Պաշտոնյա է, Ք: Հազար տարի, պապոց պապ իրենք ուրիշի լծի տակ են եղել: Պարսիկի, արաբի, թուրքի, ռուսի: Հիմա պետ է դարձել ու հարձակվել է երկրի, պետության վրա ու թալանում է: Հետո ինչ, որ էս երկիրն իր հայրենիքն է: Իր տոհմին հազար տարին մի անգամ պետ լինելու պատեհությունն է ընծայվել, ու ինքը չի կշտանում: Թալանում ու ագահ մկան նման պահում է, ոսկի գողացող կաչաղակի նման մատանիդ խլում, տանում դնում է ծառի ամենավերևի ճյուղին հյուսած բնում ու ինքը աչքը ներքև՝ նայում է:

Կաչաղակի հոգեբանություն ունի, դրա համար էլ երբ տեսնում է՝ գործ ես անում, կանգնում է գլխավերևդ ու.

– Էս ինչ ես անում,– հարցնում է քեզ հանցագործի տեղ դնելու պես, հարցնում է այնպես, որ դու ստիպված ես լինում բերանիդ հացն իրեն տալ:

– Էդ որտեղի՞ց,– ամեն պատեհ առիթով հարցնում է, ու դու քո նկատմամբ ցուցաբերած էդքան կասկածանքից վիրավորված՝ ստիպված գող ու անազնիվ ես դառնում: Իրերդ կապում ես, թե՝ ցանկանում եմ էս երկրից հեռանալ: Իսկ ինքն ու իր նմանները: Գնում ես՝ գնա, իրենց ինչ, մեկ է՝ հայրենիքի ծանրությունն իրենցը չէ: Իրենց համար հայրենիքը խորովածի սեղան է, որի հաշիվը միշտ ուրիշն է փակում, սուփրա, որը ազատ ու անկաշկանդ բացվում է քո առաջ, քանի դեռ պաշտոն ունես, և հայրենիքը լլկված՝ ինքն իրենից դժգոհ ու տխուր, կուչ է գալիս ամեն մի պաշտոնավորի ծնկի տակ:

Հրանտն ու իր նմաններն էլ պայքարելու ջիղը մոռացած՝ հիասթափված են ու դեռևս պապերի կապած ճամպրուկներն առած փախչում են՝ ուր աչքները կտրի, ուր իրենց մարդատեղ են դնում ու աշխատանք են տալիս, ուր չեն խաբում, ուր հացը դեռ չծամած՝ պատառները չեն հաշվում: Եվ հացի ու հայրենիքի տերն՝ Աստված: Աշխարհը լայն է, մի քանի ժամվա թռիչք ու Ամերիկայում ես, Ավստրալիայում, Կանադայում: Հետո ինչ, թե աշխարհում հիշողություն ասածը կա, որ կարոտ դարձած խեղդելու է ամբողջ կյանքումդ: Հիմա հիշողության դար չէ: Մատի մի հպում ու համակարգիչ անունով խելացի մեքենան աշխարհը բերում, լցնում է աչքերիդ մեջ: Նայիր ու տիեզերքից նկարած պապիդ բլբոզ տները տես: Տեսնես ամերիկյան արբանյակի ինչին են հարկավոր

դրանք՝ անցած դարի էդ տները, որ նկարում է: Ախր էդ նկարելու վրա միլիոններ է ծախսում, չէ՞: Մի քանի օր առաջ էր՝ համակարգչի մեջ էդ ծրագիրը գտավ ու սկսեց ուսումնասիրել իրենց քաղաքը, իր ծննդավայր գյուղն ու զարմացավ: Էսքան միլիոնն ինչի՞ են ծախսում: Հետո էլ մտածեց. դե որ ծախսում են, ուրեմն իրենց պետք է: Եթե այդ ամենի մասին այնտեղ՝ օվկիանոսից այն կողմ գիտեն, ուրիշ էլ ինչ է մնում: Նայեց համակարգչի էկրանին ու քչփչաց. «Ես ինչ ունեմ: Ունեցածս մի հին պիջակ է: Ո՞վ գիտե, քո խելացի ալեհավաքները քանի անգամ են իմ խեղճ լուսամուտից ներս մտել ու խուզարկել էդ կիսամաշ բաճկոնի գրպանները»:

Սուրենի կարծիքով էս ամենի, էս արտագաղթի, երիտասարդների փողոսեր, հաճույքասեր էս բնույթի համար պատասխանատուն առաջին հերթին օվկիանոսից այն կողմ նստած, սատանայից յոթ օր առաջ ծնվածներն են, որ փորձում եմ մտնել մարդկանց հոգիների մեջ ու կառավարել, նրանց դարձնել անհայրենիք, անհիշողություն, անսիրտ:

Այդպես մտքերի մեջ ընկած նստել էր խոհանոցի սեղանին կռթնած ու նայում էր մի կետի: Կինն ու տղան չէին համարձակվում խանգարել, չէին ուզում ավելորդ տեղը խոսեցնել: Կինը, որդու հայտնած լուրից մի բուռ էր դարձել ու մատներով խաղում էր սփռոցի նախշերի հետ: Խաղում էր՝ ինքնաբերաբար կրկնելով թոռան շարժումները: Թոռը, երբ իրենց տանն էր լինում, սիրում էր խաղալ սփռոցի նախշերի հետ: Կինը ձեռքերը շարժում էր պատկերների վրա ու իրենից գաղտնի արդեն կարոտում էր դեռևս արտերկիր չմեկնած թոռան թաթիկներին:

– Դա՛,– վերջապես ծոր տվեց Սուրենը,– գնու՞մ եք: Բա էս երկիրը, բա էս երկրի համար էդքան թափած արյո՞ւնը, բա, Վարդան Մամիկոնյա՞նը:

«Ձեր Վարդանով զզվեցրիք,– ուզում էր հակադարձել տղան, բայց չհամարձակվեց ու մտքի մեջ շարունակեց,– արդեն քանի դար՝ մի պարտված զորավարի դրոշ եք դարձրել ազգովի ու գոռում եք: Գոռում եք, թշնամու աչքը մտցնում, բայց երկիրը շենացնել չեք կարողանում: Հիմա էլ ձեր չարաշի ծանրությունն ուզում եք մեր ուսերին թողնել»:

– Մնացեք, երկիրը շենացրեք,– կարծես նրա մտքերը լսել էր՝ ասաց հայրը:

– Ո՞նց,– տնքաց տղան,– շենացնենք: Ինչքա՞ն անգործ թափառեմ, ինչքա՞ն աչքս ուրիշի ունեցածին տնկած թուքս կուլ տամ, էրեխեքիս ինչքա՞ն խաբեմ: Ես մի կյանք ունեմ ու էդ կյանքի տերը ես եմ:

– Ճիշտ է, բայց դու ճակատագրով հայ ես:

– Ես էդ ճակատագիրը չեմ ուզում,– գոռաց տղան, -չեմ ցանկանում:

– Դե լավ, գնա Կանադա,– տնքաց հայրը,– բայց չմոռանաս օվկիանոսն անցնելիս քեզ Աստծով տված ամեն ինչ ջուրը գցել: Մոռացիր ամեն ինչ ու կանադական ափ դուրս արի նոր մարդու պես: Դու ոչ հիշողություն ունես, ոչ ապուպապի գերեզման, ոչ ծնող, ոչ հայրենի հող: Դու ու նորածին գառը մեկ եք՝ երկուսդ էլ ուսերիդ ծանրացած պատմության բեռի հիշողությունը չունեք:

Կայարան

Տղադ կմեծանա, կհարցնի ինչ ազգ եմ, կպատասխանես՝ խափշիկ, կանադացի, էսկիմոս: Էդ պահին կտեսնես՝ որ ազգն է լավ ապրում, ով է ավելի կուշտ, ում մեքենան է ավելի արագընթաց, նրա անունն էլ կտաս:

– Դու ամեն ինչ բարդացնում ես: Կանադայում հայ համայնք կա, դպրոց, երեխան հայերեն կարդալ էլ կիմանա, հայ էլ կմնա: Եվ այդ ամենին գումարած՝ մարդավարի կապրի:

– Էդ քո ասածները էս հողի վրա իրականացնել հնարավոր չէ՞: Տղա ջան, մարդը ծառ չէ, մարդը բույս չէ, որ հիշողություն չունենա,– Սուրենի բառերն սպառվում էին, ուզում էր տղային համոզել, զգում էր, որ չի կարողանում և ակամա հիշում էր, թե ինքն ինչպես շենքի կողքի քարուտը հողամասի վերածեց, մատղաշ խնձորենիներ տնկեց՝ չորս խնձորենի: Չէ, հինգը: Մեկը չորացավ, չորսն աճեցին ու հիմա ամեն գարնան հիանալի ծաղիկ են տալիս: Ինքը միայն ծաղկունքի տերն է, պտուղը մասուրի չափ չդարձած՝ թաղի երեխաները թռցնում են: Սուրենը ծաղկունքի համար էլ շնորհակալ է: Եթե ուշադիր ու սիրով նայես, ծաղկած խնձորենին հրաշք է: Ուզում էր տղայի հետ խնձորենիների մասին խոսել, բայց հասկացավ, որ դա փաստարկ չէ: Տղան ու իր սերնդակիցները դատարկ բաների վրա ուշադրություն դարձնող չեն: Նրանք իրական, շոշափելի ու գործնական արդյունք են ուզում: Կանադայում խնձորենի չկա՞, թե՞ դրանց ծաղիկը ծաղիկ չէ:

Ուզում էր, որ տղան չգնա, գիտեր՝ այնտեղ գուցեև լավ էլ ապրի, բայց նրա գնալն իր, խնձորենիների ու իրենց անհրապույր քաղաքի նկատմամբ դավաճանություն էր համարում: Գիտեր, որ աշխարհում սխալ բան է կատարվում, իր անզորությունն էր զգում, զգում էր այդ սխալն ուղղել չկարողանալու անկարողությունը և սիրտը մրմռում էր: Վիրավորված, բզիկ-բզիկ եղած սիրտը մրմռում էր: Եվ հետաքրքիրն այն էր, որ մրմռում էր այնտեղ, որտեղ հոր վերքի սպին էր՝ հենց ձախ թիակի տակ: Հայրը տասնութ տարեկանում պատերազմ էր գնացել՝ գերմանացու պատերազմ ու կռվել էր ուկրաինական տափաստաններում: Հայաստանի սահմանն էր պաշտպանել:

– Թե գերմանացին հաղթեր,– ասում էր,– թուրքը Հայաստան կմտներ:

Հայաստանում հոր ունեցածը հին ու հողածածակ հայրական տունն էր եղել, գյուղի հազարամյա խաչքարերը և իրենց երդիկից ամեն օր ելնող, երկնքի դեմքն ազնվացնող ծուխը: Հենց դրանք էլ պահել էին նրան վիրավոր ժամանակ: Արկի բռնցքաչափ բեկորը խրվել էր թիկունքը: Բախտը բերել էր, որ թոքերին կամ սրտին չէր հասել: Դաշտային հոսպիտալում վիրաբույժ կինը լաց լինելով պայքարել էր վիրավոր զինվորի կյանքի համար: Թմրեցնող ոչ մի միջոց չէր ունեցել: Աղաջուր էր սրսկել վերքի մեջ ու փորձել էր բեկորը դուրս քաշել մարմնի միջից: Լաց էր եղել, վիրավորի տառապալից գոռոցի համար ու վերքի միջից դուրս էր քաշել բեկորը:

– Էդպիսի ցավ կյանքիս մեջ այլևս չեմ զգացել,– ասում էր հայրը,– էնպիսի ցավ էր, որ ասես սիրտդ ողջ-ողջ դուրս էին քաշում բերանիցդ: Եվ զարմանա-

լին էն էր, որ էդ ահավոր, էդ աշխարհը գլխիդ փլվելու չափ ահավոր ցավը մի քիչ մեղմանում էր բժշկուհու արցունքից ու քնքուշ խոսքից:

Ուշագնաց լինելուց առաջ հայրը պարզ ու կենդանի տեսել էր իրենց գյուղը, տունը, խաչքարերը և ծուխը, զուլալ, երկնքի ազնվությունը պտղունց առ պտղունց ազնվացնող աթարի ծուխը:

Ու էդ ցավը հիմա բուն էր դրել թիկունքի վրա՝ հենց հոր սպիի տեղում: Գիտեր, հասկանում էր, որ վիրահատված սիրտն է մրմռում:

– Դե կանգնիր, էլի,– սրտին դիմեց,– կաղ մարդու նման վազել ես ուզում, որ ինչ,– տնքաց, բայց կնոջից գաղտնի դեղ խմեց:

Տղան վաղուց ճամպրուկն առել, գնացել էր, իսկ Սուրենը պտտվում էր տան մեջ: Ինքն իրեն գամում էր անարգանքի պատին, բայց գիտեր, որ այլ կերպ ապրել չէր կարող: Ինքն էդ ամենն առել էր հորից, հայրը՝ պապից, պապը...Ախր ամեն ազգ, ամեն սերունդ, ամեն մարդ իր ցավն է ունենում: Ամեն սերունդ աշխատում է մի քիչ պակասեցնել ընդհանուր ցավն ու մի քիչ ավելի պակաս հոգս փոխանցել զավակին: Ու պապն իր մեծ ցավը մի քիչ պակասեցրած փոխանցել էր հորը, հայրը Հայաստանի համար ուկրաինական տափաստանում ստացած վերքով, թիկունքի հսկա սպիով պատերազմի հիշողության ցավը մի քիչ պակասեցրած իրեն է փոխանցել, ինքն իր սերնդի, իր հողի ցավն իր միջով անցկացրած՝ սրտի վիրահատություն է տարել, որ մի քիչ ավելի թեթև ու մի քիչ ավելի անցավ ցավ փոխանցի որդուն, իսկ որդին... Որդին ոչ էդ ցավին է ցանկանում տեր կանգնել, ոչ էդ հիշողությանը, ոչ հողի ծանրությանը: Ցանկանում է հեռուներում լավ կյանք գտնել ու անցավ ապրել, չհասկանալով, որ գեներով, ճակատագրով ու արյամբ փոխանցվածը միայն Աստված կարող է փոխել:

Ամբողջ գիշեր պտտվեց անկողնում: Բարձը չոր էր, ասես քար դրված լիներ գլխի տակ, անկողինը՝ մեկ սառը, մեկ շոգեցնող, կնոջ ներկայությունը, որ միշտ հաճելի ու ճգող էր, հիմա կատաղեցնում ու վանում էր:

Ցայգալույսին վեր կացավ, շորերը գցեց վրան, պահարանի միջից դուրս քաշեց երկփողանին, տուփով փամփուշտները հանեց ու դուրս եկավ: Վերելակ չնստեց: Հրացանը ծանր-ծանր էր, ասես իր ձեռքին սովոր ու սիրելի չէր, ասես ինքը չէր, որ պատանեկությունից դրանով որս էր արել, ասես...

Իջավ իններորդ հարկից ու դուրս եկավ: Ցայգալույսի սառնությունը խփեց դեմքին, ու հաճելի էր: Քայլեց շենքի կողքով, հասավ խնձորենիներին, մոտեցավ, ձեռքով շոյեց Մեծի բույնը.

– Իզո՞ր տնկեցի:

– Տնկածդ խաղողի ո՞րթ էր, թե՞ բանանի ծառ,– ինքն իրեն ձեռ առավ:

– Էդ կարողացա: Իմ տնկածն է ու ինձ չի խաբի, ուրիշի ունեցածը սրանից լավն է գուցե, բայց իմը չէ, ուրիշինն է: Աստված էս երկիրն ու էս կյանքը բաժին հանեց ինձ, ու ես սրանից դժգոհ չեմ:

Հրացանի փողից բռնած անցավ խնձորենիների մոտով, մտավ դպրոցի

բակը: Արձակուրդում գտնվող դպրոցը մի քիչ տխուր ու մտախոհ էր, բայց գիտեր, որ մի տասը-տասնհինգ օր հետո լցվելու է երեխաների աղմուկով:

Ցայգալույսին ամեն ինչ խաղաղ էր, խանգարող չկար: Նստեց մարզահրապարակում, հրացանը ծնկներին դրած՝ գլուխը ետ գցեց ու նայեց երկնքին: Աստղերը մեծ, պայծառ, լուսավոր, հեռու, մոտիկ: Ոչ մեկը մյուսին նման չէր: Սրտի ցավը նորից բռնեց: Տղայի գնալու մտքի հետ հաշտվել էր կարծես: Հիմա թոռն էր գալիս աչքի առաջ: Գոնե իր անունը չդնեին: Թող անունը դնեին Էրիկ, Ալեն, թեկուզ՝ Սանչո, միայն թե Սուրեն չդնեին: Սուրենն իր պապի անունն էր եղել, ու իր թոռը իրենց տոհմի իր իմացած չորրորդ Սուրենն է:

– Լուսի պես անունն աղավաղելու են,– շշնջաց դժգոհ, ասես հիմա ամենակարևորն այդ էր,– ի՞նչ են ասելու՝ Սըրե՜ն, Սա՞յրըն, Սուղե՜ն, թե՜ ուրիշ բան: Մի՞թե ուրիշի համար կարևոր էր այդ անվան ճիշտ արտասանությունը, այդ անվան կամ իրենց Խաչատրյան ազգանվան ծագումը:

Նա դանդաղ բացեց փամփուշտների տուփը, հրացանը լիցքավորեց ու փողը երկինք ուղղեց:

– Բու՜մբ,– թնդաց կրակոցը,– բու՜մբ,– երկրորդեց:

Նայեց վերև՝ գիտեր՝ իր գնդակն աստղերին չի հասնում, բայց նրանց անտարբեր փայլը տեսնելով ավելի կատաղեց ու նորից լիցքավորեց հրացանը:

Ցայգալույսի մեջ հրացանի կրակոցներն արձագանքում էին՝ ինչպես նագանի կրակոցները պապի օրերում, ինչպես հոր թիկունքը վիրավորած գերմանական արկի պայթյունը և ինչպես վիրադանակն՝ իր սրտի մեջ:

Ոստիկանական մեքենան եկավ, երբ Սուրենն արդեն կես էր գցել փամփուշտների տուփը: Ոստիկաններից և ոչ մեկը երկնքի ծակված ու վիրավորված դեմքը չնկատեց: Ոչ ոք չտեսավ, որ երկնքի վիրավոր աչքից ծորացող կապույտ արցունքը գալիս, հասնում է երկրի շուրջը պտտվող տարաբնույթ արբանյակներին ու նրանց մետաղե աչքերի մեջ տարակուսանք ու զայրույթ է առաջացնում: Ոչ ոք չտեսավ, թե հրացանի անժամանակ ու հանկարծակի կրակոցներից ինչպես ծառերի արմատները հողի մեջ ստերջացան, ու պտղավիժում եղավ նրանց հոգու մեջ: Լեռնային հողում հազիվ պտղակալման դժվար ճանապարհ էին գտել ու հիմա... Այդ ամենը միայն Սուրենն էր տեսնում: Հոգնել էր, դրա համար էլ ոստիկաններին չդիմադրեց: Հրացանը սուսուփուս մեկնեց նրանց ու ինքնակամ նստեց «Վիլիսը»...